ԷՄԵՐԱԼԴ ՑԱՆՑ

Եվրոպայի բնական միջավայրի պահպանությանն ուղղված միջոց

Funded
by the European Union

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

ԻՆՉՈՒ՞ Է ՊԵՏՔ ՊԱՀՊԱՆԵԼ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Կենսաբազմազանության անկումը շարունակվում է ինչպես Եվրոպայում, այնպես էլ ողջ աշխարհում: Ըստ հաշվարկների՝ տեսակների վերացման ներկայիս տեմպերը 100-ից 1000 անգամ ավելի արագ են, քան բնական պայմաններում և շատ ավելի արագ, քան նոր տեսակների հայտնաբերման տեմպերը: Բնության պահպանության միջազգային միության տվյալների համաձայն Եվրոպայում կաթնասունների 15% -ին, թռչունների 13%-ին, քաղցրահամ ջրերում ապրող ձկների 37 % - ին և երկկենցաղների 23% -ին սպառնում է վերացման վտանգը: Կենսաբազմազանությունը բնական ժառանգություն է, որն անհրաժեշտ է պահպանել և փոխանցել ապագա սերունդներին, հատկապես նկատի առնելով դրա կենսական նշանակությունը և այն էկոհամակարգային ծառայությունները, որոնք այն ապահովում է (օրինակ, սննդամթերքով ապահովումը, օդի որակի բարելավումը, ջրերի մաքրումը, բույսերի փոշոտումը կամ առողջարար ժամանցի անցկացումը): Բնական միջավայրի դեգրադացումը, աղտոտումը, բնական տարածքների գերօգտագործումը և արհեստական լանդշաֆտների ստեղծումը այն հիմնական պատճառներն են, որոնք հանգեցնում են կենսաբազմազանության կորստին: Այսպիսով, բնական միջավայրի պահպանությունը այդ երևույթներին հակազդելու և հետևաբար վայրի բուսական և կենդանական աշխարհը պահպանելու կարևոր գործոն է:

ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՉՊԻՍԻ՞ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՆ ՍՏԵՂԾՎԵԼ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ

Եվրոպայի խորհուրդը ստեղծել է Եվրոպայի բնական միջավայրի պահպանության երկու հիմնական միջոց՝

- 1965թ Պահպանվող տարածքների եվրոպական վկայականը/դիպլոմը, որը միջազգային մրցանակ է, որ շնորհվում է Եվրոպայի համար բացառիկ հետաքրքրություն ներկայացնող և համարժեքորեն պահպանվող բնական կամ կիսա-բնական օրինակելի կերպով տնօրինվող տարածքներին:
- 1979թ <<Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին>> կոնվենցիան, որն առավել հայտնի է որպես <<Բեռնի կոնվենցիա>>: Այս Կոնվենցիան միջազգային իրավական փաստաթուղթ է, որը նպատակաուղղված է վայրի բուսական և կենդանական աշխարհի և դրանց բնական միջավայրի պահպանությանը, ինչպես նաև այս ոլորտում միջպետական համագործակցության նպաստմանը:

1989թ Բեռնի կոնվենցիայի պայմանավորվող կողմերը նախաձեռնեցին Եվրոպայի բնական միջավայրի պահպանության մի առանձնահատուկ միջոց՝ <<Էմերալդ ցանցի>> (Զմրուխտե ցանցի) ստեղծումը:

ԷՄԵՐԱԼԴ ՑԱՆՑԸ>> ԵՐԵՔ ԹՎԵՐՈՒՄ

2015 թ դրությամբ <<Էմերալդ ցանցը>> ներառում է՝ մոտ 3 500 թեկնածու կամ լիարժեք հավաստագրված

- մոտ 3 500 թեկնածու կամ լիարժեք հավաստագրված տարածքներ 16 երկրներում.
- գրեթե 600 000 քառ.կմ.
- մասնակից երկրների ազգային տարածքների միջինը 11 - 12 % -ը:

Ի՞ՆՉ Է <<ԷՄԵՐԱԼԴ ՑԱՆՑԸ>>

<<Էմերալդ ցանցը>> էկոլոգիական ցանց է, կազմված բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքներից (ԲՀՀՏ - ներ) :

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՑԱՆՑ

Որպես էկոլոգիական ցանց <<Էմերալդ ցանցը>> հանդիսանում է սերտորեն փոխկապակցված տարածքների կառավարման, մոնիտորինգի իրականացման և հաշվետվությունների ներկայացման մի համակարգ: Ստեղծված լինելով Բեռնի կոնվենցիայի շրջանակներում, դրա նպատակն է ապահովել սույն պայմանագրում նշված տեսակների և բնական միջավայրի երկարաժամկետ գոյատևումը՝ պայմանագրի պահանջ հանդիսացող բնության պահպանության հատուկ միջոցառումների իրականացման միջոցով (օրինակ՝ սպիտակաայտ բազեի կամ տեղաշարժվող ափամերձ ավազաթմբերի)

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ՍՏԵՂԾՎԱԾ ՑԱՆՑ

<<Էմերալդ ցանցը>> կազմված է ԲՀՀՏ-ից:

Սրանք կենսական նշանակություն ունեցող տարածքներ են, որոնք ունեն ներուժ շահեկան իրավիճակում պահպանելու և վերականգնելու տեսակները և բնական միջավայրը, հատկապես՝

- այն տեսակները, որոնք վտանգված են, էնդեմիկ են, միգրացվող են և խստորեն պահպանվում են Բեռնի կոնվենցիայով,
- բնական միջավայրի վտանգված և հազվադեպ հանդիպող տիպերը, ինչպես նաև տարբեր բնական միջավայրերի տեսակների մոզաիկ համադրումը,
- միգրացվող տեսակները, որոնք հանդիսանում են եվրոպական երկրների ընդհանուր ժառանգությունը:

Բեռնի կոնվենցիայի պայմանավորվող կողմ հանդիսացող երկրների կանխորոշած ԲՀՀՏ-ները գիտականորեն գնահատվել են որպես լիովին համապատասխանող տեսակների և բնական միջավայրի պահպանության չափորոշիչներին: Սա այն դեպքն է, երբ՝

- այս տարածքներում տեսակները և բնական միջավայրը բավական լավ են ներկայացված տարածման սահմանների, բազմազանության և պահպանության հատուկ կարիքների ապահովման առումով,
- այդ տարածքները ներառում են բնական միջավայրի տարածքի և տեսակների պոպուլիացիայի զգալի մասնաբաժին՝ ի համեմատ ընդհանուր ազգային ռեսուրսների:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՇԽԱՏՈՒՄ <<ԷՄԵՐԱԼԴ ՑԱՆՑԸ>> ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

<<Էմերալդ ցանցի>> ստեղծումը մի բարդ ու ժամանակատար գործընթաց է: Այն բաժանված է երեք փուլերի.

Թեև <<Էմերալդ ցանցի >> ստեղծումը բաժանված է երեք փուլերի, այն բավական կրկնվող գործընթաց է: Օրինակ, առաջարկվող տարածքների ցուցակների

1- ին փուլ

- Բնական ռեսուրսների ազգային գնահատում և պահպանության ենթակա տեսակների և բնական միջավայրի նույնականացում
- <Էմերալդ ցանցի>> պոտենցիալ տարածքների ընտրություն

2-րդ փուլ

- Թեկնածու տարածքների գիտական գնահատում պարզելու համար՝ համապատասխանում են դրանք արդյոք <<Էմերալդ ցանցի>> պահանջներին
- Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տարածքների առաջարկ
- Բեռնի կոնվենցիայի Մշտական հանձնաժողովի կողմից ընդունման համար <<Էմերալդ ցանցի>> թեկնածու տարածքների ներկայացում

3-րդ փուլ

- <<Էմերալդ ցանցում>> ընդգրկված տարածքների ազգային սահմանումները/ կարգավիճակը
- Յուրաքանչյուր սահմանված տարածքի կառավարման, մոնիտորինգի իրականացում և հաշվետվությունների կազմում

անբավարարությունը, գիտության նվաճումները կամ փոփոխությունները բնության մեջ կարող են հանգեցնել նոր առաջարկությունների անհրաժեշտությանը և այս գործընթացի վերսկսմանը:

<<ԷՄԵՐԱԼԴ ՑԱՆՑԻ>> ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2010 թվականին Բեռնի կոնվենցիայի Մշտական հանձնաժողովն ընդունեց <<Էմերալդ ցանցի>> իրականացման մի հավակնոտ ժամանակացույց: Այս ժամանակացույցը յուրաքանչյուր երկրի համար սահմանում է ուղենիշեր և վերջնաժամկետներ ցանցի ստեղծման գործընթացի տարբեր փուլերի ավարտի համար:

Ընդհանուր նպատակն է մինչ 2020 թվականը ապահովել <<Էմերալդ ցանցի>> օպերատիվ մեկնարկը:

ՈՐՏԵ՞Ղ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ <<ԷՄԵՐԱԼԴ ՑԱՆՑԻ>> ՍՏԵՂԾՈՒՄԸ

<<Էմերալդ ցանցի>> ստեղծումն իրականացվում է Բեռնի կոնվենցիայի պայմանավորվող կողմ հանդիսացող և դիտորդի կարգավիճակ ունեցող երկրներում: 2015թ նրանում ներգրավված էին Եվրոպական միությունը և նրա անդամ հանդիսացող 28 պետությունները, 19 այլ եվրոպական երկրներ և 4 աֆրիկյան պետություն:



ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ /ԵՎ ՆՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եվրամիությունը և նրա անդամ պետությունները Կոնվենցիայի և նրա ներքո՝ <<Էմերալդ ցանցի>> հանդեպ ունեցած իրենց պարտավորությունները կատարում են իրենց սեփական էկոլոգիական ցանցի՝ <<Նատուրա 2000 ցանցի>> միջոցով:

Եվրամիության անդամ հանդիսացող պայմանավորվող կողմերի համար <<Էմերալդ ցանցի>> տարածքները նույնն են, ինչ <<Նատուրա 2000-ինը>> - այս երկու ցանցերն ամբողջությամբ համատեղելի և համադրելի են միմյանց հետ:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

<<Էմերալդ ցանցը>> ստեղծվել է Բեռնի կոնվենցիայի պայմանավորվող կողմերի և դիտորդ պետությունների Եվրամիությանը հարող տարածքներում:

<<Էմերալդ ցանցը>> Եվրոպայի բնության պահպանության ստանդարտները տարածում է Եվրամիության սահմաններից դուրս: Ավելին, դրա ստեղծումը թեկնածու պետություններին աջակցում է Եվրամիությանն անդամակցելու համար՝ նախապատրաստելով նրանց <<Նատուրա 2000-ի>> իրականացմանը և հետևաբար նպաստում է նաև Եվրամիությանը միանալուն:

Ներկայումս Բեռնի կոնվենցիայի 16 պայմանավորվող կողմեր և դիտորդ պետություններ ակտիվորեն աշխատում են << Էմերալդ ցանցի >> ստեղծման վրա: Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի 7 երկրներ Եվրամիության/ Եվրոպայի խորհրդի կողմից ներառվել են <<Բնության պահպանության տարածքների Էմերալդ ցանց, II-րդ փուլ>> համատեղ ծրագրում, և այդ կառույցներից ստանում են ֆինանսական աջակցություն <<Էմերալդ ցանցի>> ստեղծման համար: Այս ծրագիրն ընդգրկում է 2012 - 2016թթ և վերաբերում Ադրբեջանին, Բելառուսին, Հայաստանին, Մոլդովայի Հանրապետությանը, Ռուսաստանի Դաշնությանը, Ուկրաինային և Վրաստանին:

ԱՖՐԻԿՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<<Էմերալդ ցանցի>> տարածումը դեպի Աֆրիկա կարևոր է միգրացվող տեսակների պահպանության համար: Մասնավորապես այն կարող է նպաստել փոխելու Եվրոպայի համար կարևոր նշանակություն ունեցող միգրացվող տեսակների պահպանության իրավիճակում տիրող բացասական միտումը: Այն կարող է նաև խթանել համաձայնեցված գործողությունների իրականացումը՝ պահպանելու համար այս տեսակների գենետիկ բազմազանությունը և բնական միջավայրը:

Մարոկկոյի Թագավորությունը <<Էմերալդ ցանցի>> ստեղծման մասնակից ակտիվ երկրներից է:

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ԱՆՁ՝

Իվա Օբրետենովա
Կենսաբազմազանության բաժնի պետ
Բեռնի Կոնվենցիայի Քարտուղար
DG II- Democracy/Ժողովրդավարության
F-67075 Ստրասբուրգ, Cedex
Հեռ.: +33 (0)3 90 21 58 81
Էլ.հասցե: : Iva.Obretenova@coe.int

Հասմիկ Ղալաչյան
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի
կենսառեսուրսների կառավարման գործակալության
բուսական ռեսուրսների կառավարման բաժնի պետ,
0011,ք.Երևան, Հանրապետության հր.,
Կառավարական 3-րդ տուն
Հեռ. : +374 (0) 11818582
Էլ.փոստ: ghalachyanhasmik@yahoo.com
hasmik.ghalachyan@mnp.am

www.coe.int/emerald
www.coe.int/bernconvention

www.facebook.com/bernconvention

PREMS 109316 – © Եվրոպայի խորհուրդ – մայիս, 2016թ
Photos: Agency for Protected Areas of Georgia; Ivana d'Alessandro; Aleksandrova; Merike Linnamägi; Rashad Allahverdiyev; Valentino Mastrella.

ARM

The Council of Europe is the continent's leading human rights organisation. It comprises 47 member states, 28 of which are members of the European Union. All Council of Europe member states have signed up to the European Convention on Human Rights, a treaty designed to protect human rights, democracy and the rule of law. The European Court of Human Rights oversees the implementation of the Convention in the member states.

www.coe.int

The European Union (EU) is a unique economic and political partnership between 28 democratic European countries. Its aims are peace, prosperity and freedom for its 500 million citizens – in a fairer, safer world. To make things happen, EU countries set up bodies to run the EU and adopt its legislation. The main ones are the European Parliament (representing the people of Europe), the Council of the European Union (representing national governments) and the European Commission (representing the common EU interest).

http://europa.eu

Funded by the European Union

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe